# ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՈՒՑ Ի ՍԵԲԱՍՏԻԱ

*(Շարունակութիւն։)*

—

## 89.

### ՄԱՇԹՈՑ

?

*ԹՈՒՂԹՔ՝ 167։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18×14։ — ՆԻՒԹ՝ թուղթ; — ԿԱԶՄ՝ կաշեկազմ։ Էջ 320—321, յիշատակարանին մէջ կը յիշուի թէ ձեռագիրս գրուած է ի թվին Հայոց ՌԺԵ (1015+551=) 1566. ի գաւառն Մելտինի, ի դուռն Ս. Աստուածածնին, Ս. Սարգսին եւ սուրբ Փրկչին, ձեռամբ Գրիգոր երիցու։*

**Մատեանս է Մաշին, շատ հինցած։**

## 90.

### ՄԱՇԹՈՑ

?

*ԹՈՒՂԹՔ՝ 226 (=452 էջք)։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 19×15×6 սնտ.։ — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն։ — ՏՈՂՔ՝ մէն մի էջը 18 տողք։ — ՆԻՒԹ՝ թուղթ։ — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ։ — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ չկան։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ կողքերը քրքրուած, մգլոտած։ — ԴԱՏ. ԹՈՒՂԹՔ՝ 244—245։ — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ տժգնուած կարմիր թանաքով։ — ԳԻՐ՝ բոլոր։ — ԹԱՆԱՔ՝ սեւ։ — ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ երկաթագիր, քիչ անգամ զարդագիր։ — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ անարժէք։ — ՄԱՆՐԱՆԿԱՐՔ, ԽՈՐԱՆՔ, ԿԻՍԱԽՈՐԱՆՔ՝ չկան։ — ԳՐԻՉ՝ եւ այլ պարագայք կը մնան անյայտ։ Էջ 3, կնիք Ս. Նշանի մատենադարանին, որուն սեփականութիւնն է։*

**Մատեանս է Մաշին։**

## 91.

### ՄԱՇԹՈՑ

?

*ԹՈՒՂԹՔ՝ 125 (=250 էջք)։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20×15×4 սնտ.։ — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն։ — ՏՈՂՔ՝ 22։ — ՆԻՒԹ՝ թուղթ։ — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ։ — ՄԱԳԱՂԱԹԵԱՑ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ չկան։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ գէշ պահուած։ — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ կարմիր թանաք։ — ԳԻՐ՝ բոլորգիր։ — ԹԱՆԱՔ՝ սեւ։ — ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ պարզ։ — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ անարժէք։ — ՄԱՆՐԱՆԿԱՐՔ, ԽՈՐԱՆՔ, ԿԻՍԱԽՈՐԱՆՔ՝ չկան։ Վերջի թուղթերն բոլորովին փտած եւ փրթած ըլլալով, յիշատակարանք եւ այլ ծանօթութիւնք ջնջուած են։ — ԿՆԻՔ՝ էջ 3, Ս. Նշան վանաց մատենադարանի, որուն սեփականութիւն է մատեանս։*

**Մատեանս է Մաշին։**

## 92.

### ՄԱՇԹՈՑ

1596։

*ԹՈՒՂԹՔ՝ 215 (=430 էջք)։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21×16×6 սնտ.։ — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն։ — ՏՈՂՔ՝ 19։ — ՆԻՒԹ՝ թուղթ։ — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ։ — ՄԱԳԱՂԱԹԵԱՑ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ չկան։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ բաւական լաւ։ — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ կարմիր թանաք։ — ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ պարզ։ — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ անարժէք։ — ՄԱՆՐԱՆԿԱՐՔ, ԽՈՐԱՆՔ՝ չկան։ — ԿԻՍԱԽՈՐԱՆՔ՝ էջ 9, բաւական սիրուն։ — ԳՐԻՉ՝ Յովհաննէս երէց։ — ՍՏԱՑՈՂ՝ նոյն։ — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌԽԵ (1045+551)=1596։ — ՏԵՂԻ՝ Տեւոցա։ — ԿՆԻՔ՝ էջ 3, Ս. Նշանի մատենադարանին, որուն սեփականութ. ն է մատեանս. էջ 9, կնիք անծնուէր ընկերութեան, որուն կը պատկանէր եղեր նախ։*

**Մատեանս է Մաշին։**

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. Էջ 404—406։

**«Փառք... Արդ գրեցաւ Մաշթոցս ձեռամբ իմով անպետ եւ անարհեստ գրչի, Յովհաննէս սուտանուն իրիցու, որ ոչ եմ գործոյն հետեւող, բայց միայն անուանն, ի գիւղս որ կոչի Տեւոցայ, ի դուռն սուրբ Թորոս, ի թուականութեան Հայոց ՌԽԵ. ...յիշատակ ծնողացս իմ հաւրս Աւետիքին եւ մաւրս Վարդէհատին, եւ եղբաւրս իմ Մելքոնին, եւ կողակցին իմ Նարինին, եւ ամենայն արեան մերձաւորացս... ամէն եւ եղիցի»։**

## 93.

### ՄԱՇԹՈՑ

?

*ԹՈՒՂԹՔ՝ 141 (=282 էջք)։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16×11×4 սնտ.։ — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն։ — ՏՈՂՔ՝ մէն մի էջ 15։ — ՆԻՒԹ՝ թուղթ։ — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ։ — ՄԱԳԱՂԱԹԵԱՑ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ չկան։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ բոլորովին քրքրուած։ — ԴԱՏ. ԹՈՒՂԹՔ՝ էջ 242։ — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ կարմիր թանաքով։ — ԳԻՐ՝ բոլորգիր։ — ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ պարզ։ — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ չկան։ — ՄԱՆՐԱՆԿԱՐՔ, ԽՈՐԱՆՔ ԵՒ ԿԻՍԱԽՈՐԱՆՔ՝ չկան։ — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ՝ չունի, այս պատճառաւ անծանօթ կը մնան յարակից պարագայք։ — ԿՆԻՔ՝ էջ 1, Ս. Նշանի մատենադարանին, որուն սեփականութիւն է մատեանս։*

**Մատեանս է Մաշին։**

## 94.

### ՄԱՇԹՈՑ

?

*ԹՈՒՂԹՔ՝ 147 (=294 էջք)։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21×15×5 սնտ.։ — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն։ — ՏՈՂՔ՝ 19. — ՆԻՒԹ՝ թուղթ։ — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ; — ՄԱԳԱՂԱԹԵԱՑ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ չկան։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ քրքրուած, 57-88 էջերը անշնորհք գրչութեամբ նորոգուած։ — ԴԱՏ. ԹՈՒՂԹՔ՝ 57-62 էջք։ — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ կարմիր թանաք։ — ԳԻՐ՝ բոլորգիր։ — ԹԱՆԱՔ՝ սեւ։*

ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ պարզ: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ անարժէք: — ՄԱՆՐԱՆԿԱՐՔ, ԽՈՐԱՆՔ ԵՒ ԿԻՍԱԽՈՐԱՆՔ՝ չկան: — ԳՐԻՉ՝ Ստեփանոս երէց: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ՝ միայն առաջին քանի մը տողերը մնացած ըլլալով, միւս պարագայք կը մնան անյայտ: — ԿՆԻՔ՝ էջ 1, Ս. Նշանի մատենադարանին, որուն է սեփականութիւն:

**Մատեանս է Մաշթոց:**

95.

## ՄԱՇԹՈՑ

1625:

ԹՈՒՂԹՔ՝ 254 (= 508 էջք): — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20×14½×5 մնտ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: — ՏՈՂՔ՝ 19: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ. առաջակողմն ու լանջքը սիրուն դրոշմուածքներով: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ երկու կողմն ալ կան երկերկու թերթ, միջին մեսրոպեան երկաթագիր. Աւետարանէն հատուածներ: — ՀԱՆԴԱՄԱՆՔ՝ լաւ: — ԴԱՏ. ԹՈՒՂԹՔ՝ 499—504: — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ կարմիր թանաքով: — ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ սիրուն զարդագրեր: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ գեղեցիկ բայց սակաւաթիւ: — ՄԱՆՐԱՆԿԱՐՔ, ԽՈՐԱՆՔ ԵՒ ԿԻՍԱԽՈՐԱՆՔ՝ չկան: — ԳՐԻՉ՝ ոմն դպիր, որ յիշատակարանին մէջ ծածկագրութեամբ կը դնէ իւր անունը: — ՍՏԱՑՈՂ՝ Անդրէաս արքեպս. Սեբաստիոյ: — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՀԴ (1074 + 551) = 1625: — ՏԵՂԻ՝ Եւդոկիա (?): — ԿՆԻՔ՝ էջ 7, Ս. Նշանի մատենադարանին, որուն սեփականութիւն է մատեանս:

**Մատեանս է Մաշթոց:**

ա. Ձեռնադրութիւն դպրի, սաղմոսացի եւ քահանայի. որուն իբր նախադուռ գրուած է "Սահմանագրութիւն դաստիարակութեան նորածնելոց մանկանց որ հրաւիրելոց են յաստիճան քահանայութեան, խրատք հարկաւորք եւ պիտանիք, արարեալ մեծ վարժապետին Գրիգորի Հռետորի": — "Արդ ըստ ժամանակին վարժել զմանկունս ի սնունդ սրբութեան... արժանի լինիցիք շնորհացն Աստուծոյ": 1—26:

բ. Եկեղեցի օրհնելոյ. մնացեալն նման վերիններուն:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. էջ 498. "Փառք… Արդ գրեցաւ Մաշթոցս կարողութեամբն Աստուծոյ ի ձեռս ունմն դպրի, եւ խրատով ուսուցչին իմոյ տէր Գրիգորին, ի խնդրոյ սրբասնունդ եւ աստուածահաճոյ վարուց Անդրէաս արհեպիսկոպոսի, սպասաւորի Սեբաստիա սուրբ եւ հրաշափառ Նշանին: Զոր տէր Աստուած բարով վայելել տացէ ընդ երկայն աւուրս ամէն. ի թվին Հայոց ՌՀԴ, կատարեցաւ գիրքս ձեռամբ սուտ անուն (հոս կը կցուի անծանօթ յունարէն տառերու նման գրերով անուն մը) ի քաղաքն Եւդոկիա, ընդ հովանեաւ սուրբ Սարգսին եւ սուրբ Աստուածածնին, աղաչեմ յիշել ի Տէր Հայր մեղայի":

96.

## ՄԱՇԹՈՑ

?

ԹՈՒՂԹՔ՝ 358 (= 716 էջք): — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 24×15×6 մնտ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: — ՏՈՂՔ՝ 19: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ քայքայուած: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ չկան: — ՀԱՆԴԱՄԱՆՔ՝ թրջած եւ մգլոտած: — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ կարմիր թանաքով: — ԳԻՐ՝ հրահանգները եւ քարոզները՝ անցման գեղեցիկ գիր. աղօթքներն ու ընթերցուածները՝ բոլորգիր եւ նոտրգրի միջեւ կարծես անցման կէտ մը կազմող գիր մը: — ԹԱՆԱՔ՝ սեւ: — ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ Մեսրոպեան երկաթագիրներ: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ հնադրոշմ պարզութեան գեղեցիկ ծեւեր, մուգ գոյներով: — ՄԱՆՐԱՆԿԱՐՔ, ԽՈՐԱՆՔ ԵՒ ԿԻՍԱԽՈՐԱՆՔ՝ չկան: — ԳՐԻՉ ԵՒ ՍՏԱՑՈՂ՝ Յովհաննէս Հոռոմոսի Վանեցի, եղբայր Վարդանայ: Առ ի չգոյէ յիշատակարանի, անծանօթ կը մնան միւս մանրամասնութիւնք:

**Մատեանս է Մաշթոց:** Հայ Եկեղեցւոյ Ծիսարանի կազմութեան ուսումնասիրութեան համար մեծ շահեկանութիւն կը ներկայացնէ ձեռագիրս. մանրամասն համեմատութիւն մը տպագիր Մայր-Մաշթոցին կամ անոր իբր հիմ ծառայած ձեռագիրներուն հետ՝ մեծ լոյս պիտի սփռէր կարգ մը կէտերու մասին, աւելի քան երբեք անգամ մը եւս շեշտելով այն պատմա—քննական ճշմարտութիւնը թէ մեր ներկայ Ծիսարանը, հետզհետէ խճողուելով անպէտ եւ աւելորդ մանր մասունքներով, շատ ու շատ հեռացած է նախնականին տանելի եւ հաճելի պարզութենէն:

97.

## ՄԱՇԹՈՑ

?

ԹՈՒՂԹՔ՝ 160 էջք, որոնց 1-36 եւ 124-160 էջերը կեղտոտած են տղայական գծգծումներով: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15×10×2½ մնտ.: — ՆԻՒԹ՝ թուղթի վրայ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտի կազմով: — ՀԱՆԴԱՄԱՆՔ՝ սկիզբը պակասաւոր: — ՏԵՂԻ՝ սեփականութիւն Ս. Հրեշտակապետ վանուց Սեբաստիոյ:

**Մատեանս է Մաշթոց Մեռելաթաղի,** յորում կայ աշխարհականաց թաղման կարգը. Մեռելաթաղի սկիզբի մասը կը պակսի, կարգը կը սկսի "Աստուած յաւիտենական, անսկիզբն" եւն աղօթքով, կը վերջանայ Մեռելական ողբերով. իբրեւ ձեռագիր չունի ոչ մէկ արժէք, չկան յիշատակարաններ եւն. յայտնապէս վերջին ժամանակաց գրուածք է, նոտր եւ մասամբ բոլորգիր անմաքուր գրչութեամբ:

## 98.

## ՄԱՇԹՈՑ

?

ԹՈՒՂԹ.Ք՝ 111 (= 222 էջք): — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22×15×5 սնտ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: — ՏՈՂ.Ք՝ մէն մի երեսը՝ 20 տողք: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՑ ՊԱՀՊԱՆԱԿ.Ք՝ չկան: — ՀԱՆԳԱՄԱՆ.Ք՝ բաւական լաւ: — ՎԵՐՆԱԳԻՐ.Ք՝ կարմիր թանաքով: — ԳԻՐ՝ նոտրգիր: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ.Ք չկան: — ԳՐԻՉ, ՏԵՂ ԵՒ ԺԱՄԱՆԱԿ՝ չեն յիշուիր: — ՑԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ.Ք՝ չկան. վերջի մասն ինկած ըլլալով: — ՏԵՂԻ՝ սեփականութիւն Ս. Նշան վանից Սեբաստիոյ:

**Մատեանս է Մաշտոց:**

## 99.

## ՄԱՇԹՈՑ

?

ԹՈՒՂԹ.Ք՝ 110 (= 220 էջք): — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22×16×3 սնտ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՏՈՂ.Ք՝ մէն մի սիւնակը՝ 29 տողք: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՑ ՊԱՀՊԱՆԱԿ.Ք՝ չկան: — ՀԱՆԳԱՄԱՆ.Ք՝ լաւ: — ՎԵՐՆԱԳԻՐ.Ք՝ կարմիր թանաքով: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ.Ք՝ չկան: — ԳՐԻՉ, ՏԵՂ ԵՒ ԺԱՄԱՆԱԿ՝ չեն յիշուիր: — ՑԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ.Ք՝ չկան: — ՏԵՂԻ՝ սեփականութիւն Ս. Նշանի Սեբաստիոյ:

**Մատեանս է Մաշտոց թաղման եկեղեցականաց, վերջին ժամանակի գործ:**

## 100.

## ՄԱՇԹՈՑ

1679:

ԹՈՒՂԹ.Ք՝ 128 (= 256 էջք): — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 19×14×4 սնտ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: — ՏՈՂ.Ք՝ մէն մի երեսը՝ 19: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՑ ՊԱՀՊԱՆԱԿ.Ք՝ չկան: — ՀԱՆԳԱՄԱՆ.Ք՝ քրքրուած: — ՎԵՐՆԱԳԻՐ.Ք՝ կարմիր թանաքով: — ԳԻՐ՝ մաքուր բոլորգիր: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ.Ք ԵՒ ՍԿԶԲՆԱՏԱՌ.Ք՝ միջակ զարդերով: — ԽՈՐԱՆ.Ք՝ չկան: — ԳՐԻՉ ԵՒ ՏԵՂԻ՝ չկայ: — ՍՏԱՑՈՂ՝ Մահտեսի Պաղտասար: — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՃԻԸ (= 1128 + 551 =) 1679: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ՝ սեփականութիւն է Ս. Սարգիս Եկեղեցւոյ Սեբաստիոյ:

**Մատեանս է Մաշտոց:**

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. (էջ 251). «Թուոյն ՌՃԻԸ. կազմեցաւ նոր՝ Մաշթոցս հին. յիշատակ Մահտեսի Պաղտասարին եւ կողակցին Մահտեսի Մարուճին, Մահտեսի Հերիքին, յիշատակ է ի դրան տաճարի սրբոյն Սարգսի Եկեղեցւոյն. եւ որք հանդիպիք սմա՝ Հայր մեր ասացէք. ամէն»:

## 101.

## ՄԱՇԹՈՑ

?

ԹՈՒՂԹ.Ք՝ 356 էջք: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16×11×6 սնտ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՑ ՊԱՀՊԱՆԱԿ.Ք՝ չունի: — ՀԱՆԳԱՄԱՆ.Ք՝ շատ լաւ: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ՏԵՂԻ՝ սեփականութիւն Ս. Նշանի Սեբաստիոյ: — ՑԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ՝ չունի:

**Մատեանս է Մաշտոց:**

## 102.

## ՄԱՇԹՈՑ

?

ԹՈՒՂԹ.Ք՝ 131 (= 252 էջք): — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15×10×5 սնտ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: — ՏՈՂ.Ք՝ մէն մի երեսը՝ 16: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ խաւաքարտ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՑ ՊԱՀՊԱՆԱԿ.Ք՝ չունի: — ՀԱՆԳԱՄԱՆ.Ք՝ քայքայուած եւ թացութենէն մգլոտած: — ՎԵՐՆԱԳԻՐ.Ք՝ կարմիր: — ԳԻՐ՝ նոտր: — ՍԿԶԲՆԱՏԱՌ.Ք՝ միջակ զարդարուն: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ.Ք՝ չկան: — ԿԻՍԱԽՈՐԱՆ.Ք՝ միայն առաջին էջին վրայ կայ պարզ բան մը: — ԳՐԻՉ, ՏԵՂ ԵՒ ԺԱՄԱՆԱԿ՝ կը մնան անորոշ առ ի չգոյէ Յիշատակարանի: — ՏԵՂԻ՝ սեփականութիւն Ս. Հրեշտակապետ վանուց:

**Մատեանս է Մաշտոց՝ կանոնք ա. Վասն Մկրտութեան. բ. Քառասնամեայ տղա բերել յեկեղեցին. գ. Պսակ աւրհնելոյ. դ. Հաղորդտալոյ: ե. Աշխարհաթաղ առնել. զ. Այգուցն է. Տղաթաղ առնել. ը. Տղայի այգուց. թ. Հոգեհանգիստ առնել. ժ. Ցօնականի. ժա. Հատի պատարագաց. ժբ. Հատի մարտիրոսաց: ժգ. Գառն օրհնելոյ: Գանձ ննջեցելոց թաղման յԱռաքել վարդապետէ ասացեալ: Ողբ Առաքել վարդապետէ ասացեալ, թաղման: Այլ տաղ ազնիւ եւ գեղեցիկ: Արարիչ եւ մարդասէր... Շնորհալւոյ: Այլ ողբ մեռելի ասացեալ ի Նաղաշ վարդապետէն՝ «Արարիչ արարածոց...»: Այլ ողբ վասն մեռելի՝ «Ինձ ումէ կայր...»: Այլ ողբ վասն մեռելի՝ «Յիշէք հովւերաւքն անցայ...»: Գանձ մեռելի՝ «Ո՛վ քահանայք եւ վարդապետք...». Ամենէն վերջի դրուած է ժամագրքի առջեւ դրուած այժմեան «Մեղայ ամենասուրբ»ը. «Խոստովանանք գեղեցիկ ի Թումա վարդապետէն ասացեալ» մակագրութեամբ:**

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿԵԱՆ

(Շարունակելի:)